ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 28 » Օգոստոսի 2017 թվականի N 29

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն գյուղապետարան դիմած համայնքի 6 բնակիչներին՝ 135.0 հազար դրամ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ		
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ		
ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ		
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ		
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ		
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 28 »օգոստոսի 2017 թվականի N 28
ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017-2018 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարճաղբյուր համայնքի ավագանին լսելով և քննարկելով Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրեն Ֆ. Խաչատրյանի համայնքում 2017-2018թթ. ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումը՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Առաջարկել Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրինությանը և մանկավարժական անձնակազմին մշտական ուշադրության կենտրոնում պահել դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացը պատշաճ մակարդակով իրականացմանը, հետևել դպրոցում մանկավարժների և դպրոցականների, ինչպես նաև ծնողների հետ փոխհարաբերություններին, խստորեն պահպանել կարգապահական ներքին կանոնները, բարձր դիրքերի վրա դնել դպրոցականների ռազմահայրենասիրական և ֆիզիկական պատրաստվածությունը, աստիճանաբար անցնել դպրոցականների միանման հագուստի կրմանը, օգտագործվող գրքերի վարձավճարները հավաքագրելուց արտոնություններ սահմանել սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներին:

2(ա). Համայնքի ղեկավարին՝ աջակցել հանրակրթական դպրոցի գործունեությանը, համապատասխան մարմինների հետ լուծել դպրոցի տանիքի վերանորոգման, ջրատարի, գործարկման և ճաշարանի վերանորոգման հարցերը:

բ. Համայնքապետարանի աշխատակազմին՝ 2017-2018թթ. ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների շրջանակներում, իրականացնել համայնքի դպրոցահասակ երեխաների հաշվառում և ապահովել նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 28 » օգոստոսի 2017 թվականի N 27

ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը ներկայացրեց համայնքի 2017թ. բյուջեի սեփական եկամուտների կատարման ցուցանիշները առ. 28-08-2017թ. դրությամբ, հազար դրամ.

Հ/Հ	Եկամտատեսակ	Նախատեսված տարեկան	Նախատեսված 8 ամսվա	Փաստացի	Կատարման %-ը
1.	Գույքահարկ	2950,0	1966.6	1658.5	84.3
2.	Հողի հարկ	3430.5	2287.0	784.4	34.0
3.	-//- վարձավճար	700.0	466.6	326.2	70.0
4.	Տեղական տուրքեր	100.0	67.0	63.4	95.0
	Ընդամենը սեփական եկամուտներ	7180.5	4782.2	2832.5	59

Նշեց, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում կայացած հանդիպման ժամանակ, ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանը շատ խիստ հանձնարարականներ տվեց համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրումը ամբողջությամբ չկատարող համայնքների ղեկավարներին և պահանջեց մինչև տարեվերջ առնվազն 100 % -ով ապահովել համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարումը:
Արտահայտվեցին համայնքի ավագանու անդամներ՝,Գ.Մանուկյանը Հ. Ասատրյանը, Ա. Ավետիսյանը:
Նրանք ներկայցրեցին առաջարկություններ համայնքի 2017թ. տարեկան բյուջեն ամբողջությամբ և սահմանված եռամսյակային համամասնություններով կատարելու համար:

Որոշում

Ի կատարումն ՀՀ վարչապետր հանձնարարականի, համայնքի 2017թ-ի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումն ամբողջությամբ կատարելու համար, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանին և համայնքապետարանի աշխատակազմին.

1.Համայնքի 2001թ-ի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրմանը այսուհետև ներգրավվել համայնքի ավագանուն և համայնքապետարանի աշխատակազմին, իջեցնել կարգադրություն աշխատակազմի բոլոր մասնագետներին ըստ սպասարկման ոլորտի գործունեությունը հարկային պարտականությունների կատարման հետ կապելով:

2. Ստեղծել աշխատանքային խմբեր, համայնքի բոլոր հարկատուներին այցելելու և ծանուցելու հարկային պարտականությունների չափերին:

3. Ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը ամբողջությամբ և ըստ առանձին հարկատեսակների կատարելու ուղղությամբ:

4.Խոշոր չափի հարկային պարտքեր ունեցող և հարկային պարտականությունների կատարումից խուսափող հարկատուների նկատմամբ կիրառել համապատասխան միջոցներ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7) Ձեռնպահ (0) Դեմ (0)

Հ.Ասատրյան
Ա.Ավետիսյան
Հ. Գասպարյան
Գ. Մանուկյան
Դ. Մկրտչյան
Ռ. Ռուբենյան
Ս. Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 04 » օգոստոսի 2017 թվականի N 26
Համայնքի բյուջեից դրամական օգնություն տալու մասին

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը համայնքի ավագանու քննարկմանը ներկայացրեց գյուղապետարան դիմած 4 քաղաքացիների դիմումները, որոնք հայտնել են, որ գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները սեփական միջոցներով չեն կարող լուծել :

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և տալ դրամական օգնություն համայնքի սոցիալապես անապահով 4 բնակիչներին՝ 100.0 հազար դրամ:
Որոշումն ընդունվել է՝

Կողմ-7, Դեմ-0, Ձեռնպահ-0

1.Հ.Ասատրյան
2.Ա. Ավետիսյան
3.Հ..Գասպարյան
4.Գ. Մանուկյան
5.Դ. Մկրտչյան
6.Ռ. Ռուբենյան
7.Ս. Սիմոնյան

Համայնքի ղեկավար՝ Տ. Քոչարյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<04>> օգոստոսի 2017 թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 30-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Գասպարյանի ներկայացրած Կարճաղբյուր համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվությունը ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների առ 01-08-2017 թվականի դրությամբ (հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվությունը կցվում է) :

Որոշումն ընդունվել է.

ԿՈՂՄ (7) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ9(0)

Հ. Ասատրյան
Ա. Ավետիսյան
Հ. Գասպարյան
Գ. Մանուկյան
Դ. Մկրտչյան
Ռ. Ռուբենյան
Ս. Սիմոնյան

Համայնքի ղեկավար՝ Ֆ. Քոչարյան
Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 03 » հուլիսի 2017 թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը համայնքի ավագանու քննարկմանը ներկայացրեց գյուղապետարան դիմած 7 սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիների դիմումները:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և համայնքի բյուջեի 4729 օգնություն քաղաքացիներին հոդվածից տալ դրամական օգնություն համայնքի սոցիալապես անապահով 7 բնակիչների 210000 դրամ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ		
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ		
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀԱՅԿ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ		
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ		
ՍԻՄՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 03 » Հուլիսի 2017 թվականի N 23

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն, համայնքի ավագանին՝

Որոշում է.

Էկոգյուղ զարգացնելու նպատակով, համայնքի սեփականությունը հանդիսացող 05-055-0800-0001 ծածկագրի տակ գտնվող հողատարածքից 1000քմ տրամադրել վարձակալությամբ <<Հանրային Դիվանագիտություն>> Բարեգործական հասարակական կազմակերպությանը, տարածքում հյուղակներ կառուցելու և դրանք գյուղացիներին էկոտուրիզմ զարգացնելու նպատակով տալու համար, 99 տարի ժամկետով, տարեկան վարձավճարի չափն սահմանել 1քմ համար 22.2 ՀՀ դրամ (ընդամենը 22200 ՀՀ դրամ)

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 03 » հուլիսի 2017 թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2017 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի բյուջեի 2017թ. 6 ամսվա կատարման հաշվետվությունը. 01-01-2017թ-ից մինչև 01.07.2017թ,

հազար դրամ.

Հ/Հ	Եկամտատեսակ	Նախատեսված տարեկան	Նախատեսված 6 ամսվա	Փաստացի	Կատարման %-ը
1.	Հողի հարկ	3430.5	1715.2	663.2	39
2.	-//- վարձավճար	700.0	350.0	246.2	20
3.	Գույքահարկ ավտո.	2900.0	1450.0	1401.1	97
4.	-//- շինություններից	50.0	25.0	-	-
5.	Տեղական տուրքեր	100.0	50.0	47.4	95
	Ընդամենը սեփական եկամուտներ	7180.5	3590.2	2357.9	66
6.	Այլեկամուտներ(տեղական վճար)	1000.0	500.0	558.1	112
6.	Դոտացիա	49395.0	24697.5	24697.5	100
7.	Սուբվենցիա	5000.0	5000.0	5000.0	100
Հանրագումար		62575.5	33787.8	32613.3	97

Արտահայտվեցին համայնքի ավագանու անդամներ՝ Հ. Ասատրյանը, Ա.Ավետիսյանը, Հ. Գասպարյանը և Ս. Սիմոնյանը:
Նրանք ներկայցրեցին առաջարկություններ համայնքի 2017թ. տարեկան բյուջեն ամբողջությամբ և սահմանված եռամսյակային համամասնություններով ըստ հարկատեսակների կատարելու համար:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 84-րդ հոդվածի 2-րդ կետի ՀՀ «Բյուջետային

համակարգի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

1.Հաստատել համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի կողմից ներկայացրած համայնքի 2017թ. առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ վեցամսյա հաղորդումը:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմին՝ ամենօրյա, հետևողական աշխատանքներ տանել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը սահմանված տարեկան չափով, ամբողջությամբ և ըստ առանձին հարկատեսակների կատարելու ուղղությամբ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ
ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ